Կարգապահական գործ թիվ ԿԳ-20113

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի հունվարի 14-ի թիվ 03-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/03-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Արմեն Ֆերոյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

Քննության առնելով փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1465) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2020թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանն **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** ունի 139.000 (մեկ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի մարտից 2020թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.**

Պալատի նախագահի 03.08.2020թ. թիվ 243-Ա/ԿԳ-20113 որոշմամբ փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ

հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին 10.08.2020 թվականին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.01.2021թ., ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանը բացատրություն չի ներկայացրել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Պալատի նախագահը իր՝ 21.10.2020թ. թիվ 21/4-Ա որոշմամբ դադարեցրել է փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի փաստաբանական գործունեության թիվ 1465 արտոնագրի գործողությունը:

Նշված փաստը հաստատվում է Պալատի նախագահի՝ 21.10.2020թ. թիվ 21/4-Ա *որոշմամբ:*

5. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է:*

Տվյալ դեպքում փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է Պալատի նախագահի՝ 21.10.2020թ. թիվ 21/4-Ա որոշմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս դիմել է Պալատին իր արտոնագրի գործողությունը դադարեցնելու խնդրանքով:

Նշվածը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ առկա է Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում Սուսաննա Հովհաննիսյանի կողմից անդամավճար չվճարելու վարքագծին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1465) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սուսաննա Հովհաննիսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Արմեն Ֆերոյան

14 հունվարի 2021թ.
թիվ ԿԳ/03-Ա
ք. Երևան